ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հունվարի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

2
(2852)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄՏԱՀՈԳՎԱԾ Է «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂԻ ԳՈՐԾՈՎ

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարությունն իր մտահոգությունն է հայտնել «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնար Մանուկյանին ԱԺ հավատարմագրումից զրկելու կապակցությամբ: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի նամակի՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Բուրիչին ուշադրություն է հրավիրել «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնար Մանուկյանի մասնագիտական իրավունքների խախտման ակնհայտ փաստի վրա: Հիշեցնենք, որ 2023 թվականի դեկտեմբերի 7-ին՝ Ազգային ժողովում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿՊՀ) անդամների թեկնածության քննարկման ժամանակ, իշխող ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը ԱԺ ամբիոնից թիրախավորել էր «Ժողովուրդ» օրաթերթին, քանի որ «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր ՔՊ-ի եւ ԿՊՀ անդամի թեկնածու Հայկուհի Հարությունյանի փակ հանդիպման մանրամասները, որտեղ իշխանական պատգամավորները ճնշել էին Հայկուհի Հարությունյանին: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիր Քնար Մանուկյանը ԱԺ միջանցքում Արթուր Հովհաննիսյանից պահանջել էր բացատրություն տալ ինչած ծանր մեղադրանքների վերաբերյալ: ՔՊ քարտուղարին հարց տալու համար ԱԺ-ն զրկեց լրագրողին հավատարմագրումից: «Ժողովուրդ» թերթը նամակով կատարվածի մասին տեղեկացրել էր Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Բուրիչին, որը, մեր գրությանը ի պատասխան, հայտնել է. «Շնորհակալություն ենք հայտնում ձեր վերջին նամակի համար, որը գլխավոր քարտուղարի ուշադրությունը հրավիրում է տիկին Մանուկյանի հավատարմագիրը ՀՀ Ազգային ժողովում չեղարկելու վրա: Փաստաթուղթը փոխանցվել է Եվրոպայի խորհրդի քարտուղարության համապատասխան ծառայություններին: Օգտվելով առիթից՝Նշենք, որ լրատվամիջոցների ազատության հետ կապված մտահոգությունները կարող են զեկուցվել նաեւ Եվրոպայի խորհրդի հարթակին՝ լրագրության պաշտպանությունը եւ լրագրողների անվտանգությունը խթանելու համար: Հարթակը նպատակ ունի բարելավել լրագրողների պաշտպանությունը, ավելի արդյունավետ հասցեագրել լրագրողների նկատմամբ կիրառվող սպառնալիքները եւ բռնությունները, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում խթանել վաղ նախազգուշացման մեխանիզմները եւ արագ արձագանքման կարողությունները»: Այսպիսով, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը մտահոգված է ՀՀ-ում լրագրողին հավատարմագրից զրկելու դեպքի առիթով:

Ազգային Ժողովի 8-րդ գումարման 7-րդ նստաշրջանի քննարկվող նախագծերի շարքում է թաքնված՝ ««Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը: Այն ենթադրում է հետեւյալը. ՀՀ պետական եկամուտների կոմիտեում ներդնել կատարողականի գնահատման հիման վրա Կոմիտեի ծառայողներին հավելավճար տրամադրելու գործիքակազմ՝ հաշվի առնելով ծառայության անցնելու գրավչությունն ու շահագրգռվածությունը մեծացնելու, ծառայողների աշխատավարձերը բարձրացնելու եւ կադրերի արտահոսքը կանխելու անհրաժեշտությունը: Բանն այն է, որ, ըստ նշված նախագծի, պարգեւավճարներ ստանալը դառնում է օրենքով սահմանված կարգ, ինչը պարգեւավճարների որոշումներ ստորագրողին ազատում է պատասխանատվությունից: Նախատեսվում է, որ հավելավճարի հաշվարկման կարգով պետք է սահմանվի, որ դրա ձեւավորման ժամանակ հաշվի են առնվելու օրենքով նախատեսված պատրաստում կամ վերապատրաստում անցած լինելու հանգամանքը, որի պարագայում աշխատակիցն արդեն իսկ ունենալու է հավելավճարի 30 տոկոսը ստանալու իրավունքը: Ընդ որում՝ եթե աշխատողն ունենա Կառավարության կողմից սահմանված որակավորում եւ հարկային/մաքսային ոլորտի այլ հավաստագիր, ապա այդ աշխատողի համար պատրաստում կամ վերապատրաստում անցած լինելը հավելավճար ստանալու համար պարտադիր չի լինի, եւ նա արդեն իսկ կունենա հավելավճարի 30 տոկոսը ստանալու իրավունքը: Եթե կարճ ձեւակերպենք, ապա նախագիծը «պարգեւավճար» եզրույթը դարձնում է «հավելավճար», իսկ պարտավորությունը դնում է պետության ուսերին՝ ասելով, որ դա օրենքն է ենթադրում, այլ ոչ թե որեւէ պաշտոնյա է կամայական որոշում:

Նախորդ տարի՝ տարեվերջին, մեծ շուքով շահագործման հանձնվեց Գեղարքունիքի մարզի «Մարտունի» բժշկական կենտրոնը, որի կառուցման համար ՀՀ կառավարությունը պետական բյուջեից տրամադրել է 2 մլրդ 470 մլն դրամ կամ մոտ 6.5 մլն ԱՄՆ դոլար: Տեղեկացնենք, որ հիվանդանոցի կառուցման նախագիծն առաջարկվել է 2019 թվականին՝ նախարար Արսեն Թորոսյանի օրոք, որի կառուցումը սկսվել է 2020 թվականին, եւ այն պետք է սպասարկեր 89 հազար բնակչության: Այս տարիների ընթացքում՝ 2021-2022 թվականներին, Արսեն Թորոսյանը պարբերաբար մարզեր այցերի շրջանակներում այցելում էր նաեւ «Մարտունի» ԲԿ, իսկ 2023 թվականի ընթացքում գործող նախարար Անահիտ Ավանեսյանը բազմիցս այցելեց «Մարտունի» բժշկական կենտրոն: Նախորդ տարվա նոյեմբերին կայացավ հիվանդանոցի բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցեցին վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: «Ժողովուրդ» օրաթերթը հիվանդանոցի շատ աշխատակիցներից տեղեկացավ՝նոր կառուցված շենքը շահագործման է հանձնվել ճաքճքած պատերով, սալիկներով, սակայն նոյեմբերին Փաշինյանը ոչ ոքի աշխատանքից չազատեց եւ չպատժեց կատարված անորակ աշխատանքի համար: Հավելենք նաեւ, որ 200-հոգանոց բուժաշխատակազմից հիվանդանոցի բացմանը թույլ են տվել մասնակցել ընդամենը 8-9 հոգու, ինչը խտրական վերաբերմունք է բժիշկների հանդեպ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության բաժնի պետ Տիգրան Մարտիրոսյանի դատական նիստից առաջ ուշագրավ իրադարձութուններ են ծավալվել Հակակոռուպցիոն դատարանում: Ըստ այդմ՝ Կենտրոնի թաղապետարանի պաշտոնյայի գործով դատարան ներկայացած կանանցից մեկի մոտ եղել է ծալովի դանակ, որը կարգադրիչները հայտնաբերել են եւ առգրավել: Երբ դիմեցինք ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ՝ լուրի իսկությունը պարզելու, հայտնեցին, որ դատական կարգադրիչների մոտ առկա է արգելված իրերի ցանկ, եւ այն բոլոր քաղաքացիները, որոնց մոտ հայտնաբերվում է որեւէ արգելված իր, առգրավվում է եւ նիստի ավարտից հետո վերադարձվում քաղաքացուն: Հիշեցնենք, որ Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Ռաֆիկի Մարտիրոսյանի գործը ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան՝ քննության:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

«ԴԵՄ ԸԼԼԱԼՈՎ ԿՈՂՄ ԿԸԼԼԱ»

Երեկ՝ ԱԺ հերթական նիստի ժամանակ, ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հեղինակած աղմկահարույց՝ ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» նախագիծն ընդունվեց ամբողջությամբ: Չնայած ՔՊ-ում նախագծի հետ կապված մի շարք տարաձայնություններին՝ իշխանականները կողմ քվեարկեցին դրան: Հայկ Սարգսյանի նախագծին կողմ քվեարկեց նաեւ Հովիկ Աղազարյանը, որն ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովի նիստի ժամանակ հայտարարել էր, որ օրենքի ոգու հետ համաձայն չէ ու ամեն ինչ անելու է, որ Հայկ Սարգսյանի նախագիծը չընդունվի: Հարցի շուրջ ArmLur.am-ը զրուցել է Հովիկ Աղազարյանի հետ:

-Պարոն Աղազարյան, խոստացել էիք ամեն ինչ անել, որ Հայկ Սարգսյանի նախագիծը չընդունվի. ինչու՞ մտափոխվեցիք ու կողմ քվեարկեցիք նախագծին:

-Ես չկարողացա իմ ընկերներին հակառակը համոզել. ես միշտ քվեարկում եմ այնպես, ինչպես քվեարկում է խմբակցությունը:

-Մի՞շտ եք որոշումներն այդպես կայացնում. մի կողմ եք դնում Ձեր անձնական կարծիքը ու վարվում եք այնպես, ինչպես թիմը որոշի:

-Միշտ այդպես է եղել, այդպես էլ լինելու է: Ես իմ առանձին կարծիքն ունեմ, ես հայտնում եմ իմ առանձին կարծիքը, բայց իրավունք չունեմ մտածելու, որ իմ կարծիքն ամենաճիշտն է: Հետեւաբար, երբ իմ ընկերների մոտ իմ կարծիքն ընդհանուր ըմբռնում չի առաջացնում, ես ենթարկվում եմ մեծամասնության որոշմանը:

-Իսկ ինչու՞ չհաջողվեց Ձեր թիմակիցներին համոզել:

-Երեւի լավ չկարողացա հիմնավորել իմ թիմակիցներին, բայց հիմա էլ համոզված եմ, որ դա վատ նախագիծ է, որ, բացի վնասից, օգուտ չի տալու: Շատ շուտ դրանում կհամոզվենք, մի 6-7 ամսում կհամոզվենք, որ դրանից միայն վնաս է լինելու. կարող է այդ ժամանակ վերանայեն:

-Պարոն Աղազարյան, ստացվում է՝ կանխատեսում եք, որ նախագիծը վնաս է հասցնելու պետությանը, հասարակությանը, բայց աչք եք փակում դրա վրա ու միայն ձեր թիմի ասածով եք շարժվում:

-Հիմա ես մտահոգություններ հայտնել եմ, որ իմ ընկերներն էլ այդ ուղղությամբ մտածեն, բայց միանշանակ չէ, որ պետք է նրանք դեմ քվեարկեին. կարող է ճիշտն իրենք են: Իմ սկզբունքն է եղել երիտասարդ տարիքից, որ թիմի անդամը լսելի լինի, բայց չհավակնի, որ իր ասածն ամենաճիշտն է, պայքարի իր տեսակետի համար, բայց եթե իր տեսակետը լայն շրջանակներում հավանության չի արժանանում, ապա պարտավոր է ենթարկվել թիմի որոշմանը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԸ՝ ՈՉՆՉԱՑՎԱԾ

«Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ ընթացող բանակցությունների փաստաթղթից սահմանների դելիմիտացիայի/դեմարկացիայի եւ ռեգիոնալ ապաշրջափակման մասին դրույթների առանձնացումն ու զուգահեռ գործընթաց տանելն ամբողջությամբ զրոյացնում է, այսպես կոչված, խաղաղության օրակարգի իրացումը»,- հունվարի 16-ին ԱԺ-ում հայտարարեց ընդդիմադիր պատգամավոր, «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան աբրահամյանը:

Նա նշեց՝ եթե պարզ խոսենք, ապա խաղաղության պայմանագիրն իր մեջ 3 առանցքային հարց էր պարունակում՝ սահմանների ճշգրտում, ճանապարհների բացում՝ ապաշրջափակում եւ Արցախի հարց:

«Արցախի հարցը Հայաստանի իշխանության լուռ համաձայնությամբ Ադրբեջանը փորձեց լուծել ռազմական ճանապարհով, իսկ մյուս 2 դրույթների շուրջ ստեղծված հակասությունները փորձում են լուծել՝ դրանք պարզապես հիմնական փաստաթղթից հեռացնելով:

Ի՞նչ է ստացվում: Մի կողմից՝ ընթանում են բանակցություններ բարի ցանկությունների ու մաղթանքների մասին փաստաթղթի մասին, որը Հայաստանի իշխանությունն ինչ-որ փուլում փորձելու է թանկ ծախել հասարակության վրա, իսկ զուգահեռ իրականությունում բանակցություններն անկյունաքարային հարցերի վերաբերյալ կա փակուղային իրավիճակ»,-ասաց նա:

Աբրահամյանի խոսքով՝ սա նշանակում է, որ մեր տարածաշրջանում այդպես սպասված ու չարչրկված երկարաժամկետ խաղաղության ու կայունության մասին պետք է մոռանալ. «Իշխանությունը մի օր, ըստ քաղաքական նպատակահարմարության, խոսում է խաղաղությանը մոտ լինելու մասին՝ փափուկ բարձ դնելով հասարակության գլխի տակ, մեկ այլ իրավիճակում ստիպված է լինում խոստովանել իրականությունը՝ խոսում խաղաղության գործընթացի տորպեդավորման կամ գործընթացի վտանգման մասին:

Խաղաղություն բառը երբեք այսքան ոչնչացված չէր եղել՝ մի կողմից՝ միջազգային դերակատարների լռությունը, մի կողմից՝ Ադրբեջանի ագրեսիվ դիրքավորումը, մյուս կողմից՝ շարունակ ստեր ու կեղծիքներ հայաստանյան իշխանության կողմից, որոնք անընդհատ իրենց հետ նոր մարդկային եւ տարածքային կորուստներ են բերում:

Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունն անանախադեպ բռնաբարության է ենթարկվում, իսկ իշխանությունը շարունակում է պնդել, որ պետք է թուլանալ եւ հաճույք ստանալ:

Այս իշխանությունը հասարակության ոչ թե խաղաղության, այլ երկրի փլուզման համակերպմանն է տանում»,- հայտարարեց Տիգրան Աբրահամյանը:

«ՄԵՐ ՕՐԵՐԻ ՀԵՐՈՍՏՐԱՏԸ»

Օրերս Նիկոլ Փաշինյանն արձանագրեց իր վարած քաղաքականության տապալումը. նա այլեւս զրոյական գործիչ է. այս մասին հունվարի 16-ին՝ ԱԺ-ում հայտարարությունների ժամին, ասաց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արեգնազ Մանուկյանը:

Նրա խոսքով՝ եթե դա միայն Փաշինյանի անձնական տապալումը լիներ, ապա կարելի էր դեն նետել այդ ամենն ու մոռանալ «մեր օրերի հերոստրատին»:

Նա նշեց, որ այսօր ճշմարտության պահ է մեր ժողովրդի եւ ՔՊ-ի շարքերի համար. «Իշխող ուժի միջին ու ստորին շերտերում շատերը հասկանում են, որ Փաշինյանը ձախողել է, իրենց էլ հետն է ուզում թողնել խորտակվող նավում:

Հետեւաբար, պետք է կողմնորոշվել՝ ՔՊ-ում ուզո՞ւմ են Արցախի գերեզմանափոր դառնալուց հետո դառնալ նաեւ Հայաստանի գերեզմանափորը: Ուզո՞ւմ են դառնալ մեկ մարդու անձնական հաշվարկների, հակապետական քայլերի, սխալների, վախերի գերին: Ուզո՞ւմ են օգտագործվել ու դեն շպրտվել՝ դավաճանի խարանը ճակատներին: Դեռ մի փոքր ժամանակ կա կողմնորոշվելու, սխալներն ուղղելու, քաղաքական գերությունից դուրս գալու ժամանակը»,-ասաց նա:

ՄՄԽԵԼ ԵՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Ազգային ժողովի ամանորյա բացօթյա միջոցառումը, որը նախատեսված էր այցելած երեխաներին տոնական տրամադրություն պարգեւելու համար, այդքան էլ նպատակին չի ծառայել: «Ժողովուրդ» օրաթերթը, միջոցառման կադրերն անքթիթ զննելով, նկատեց, որ ներկաների մեծամասնությունը բարձրաստիճան պաշտոնյաներ են, բացառապես իշխանական պատգամավորներ, որոնք երեխաների հետ ներկա էին միջոցառմանը: Մի քանի քաղաքացիներ են միայն ներկա եղել, որոնք, հետաքրքրություն չգտնելով, հեռացել են:

Ստացվում է, որ միջոցառումը, որի համար պետական բյուջեից տրամադրվել էր 11 մլն 60 հազար դրամ գումար, կազմակերպվել էր միայն պաշտոնյաների եւ ՔՊ-ականների երեխաներին ուրախացնելու համար: Պաշտոնյաները իշխանության ներկայացուցիչներ էին հիմնականում, որոնք արդեն սովորություն են դարձրել սեփական կարիքների համար մսխել ՀՀ քաղաքացու աշխատանքի հարկերից կուտակված պետական բյուջեն: Ասել է թե՝ Ալեն Սիմոնյանն ու ԱԺ աշխատակազմի ղեկավարը մոտ 27 հազար ԱՄՆ դոլար են հատկացրել պետության միջոցներից՝ ՔՊ-ականներին եւ իրենց մերձավորներին զվարճացնելու համար: Կադրերում որեւէ ընդդիմադիր պատգամավորի, որեւէ «պատահական» մարդու չգտանք: ՔՊ-ն իրենց «տան անդամներով» պետության հաշվին ուրախանում էր՝ Ալեն Սիմոնյանի գլխավորությամբ:

ՀՅՈՒԲԸՆԿԱԼԵԼ Է

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հունվարի 16-ին իր առանձնատանը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիի հետ. այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում տեղեկացրել է «Հայ ազգային կոնգրես» կուսակցության խոսնակ Արման Մուսինյանը:

Նա նշել է, որ շուրջ երկու ժամ տեւած զրույցի ընթացքում հանգամանորեն քննարկվել են հայ-իրանական բարեկամության ամրապնդման, տնտեսական եւ մշակութային հարաբերությունների խորացման, ինչպես նաեւ տարածաշրջանային անվտանգության եւ հաղորդակցության ճանապարհների անխափան գործունեության ապահովման ու զարգացման խնդիրները:

Ըստ աղբյուրի՝ հանդիպմանը ներկա են եղել նաեւ դեսպանության խորհրդական Ալի Ասղար Շահամաթդարը եւ ՀՀ առաջին նախագահի գրասենյակի տնօրեն Ավետիս Ավագյանը:

ՔԱՐՏԵԶ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ

Ազգային ժողովի իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանն անդրադարձել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությանը, թե Ադրբեջանը մերժում է հայկական կողմի առաջարկած քարտեզները սահմանի դեմարկացիան իրականացնելու համար: Պապոյանն ընդգծել է, որ այդ հայտարարությունն անընդունելի է Հայաստանի համար, միեւնույն ժամանակ հավելել, որ մերժելու դեպքում Ադրբեջանը պետք է ներկայացնի այնպիսի քարտեզներ, որոնք իրավական հիմք ունեն:

Պատգամավորը նշեց, որ հայկական կողմը ցանկանում է, որպեսզի բանակցությունների սեղանին դրվի ցանկացած քարտեզ, որն ունի իրավական հիմք:

«Դուք ասում եք, որ Ադրբեջանը մերժում է հայկական կողմի առաջարկած քարտեզները: Այդ դեպքում Ադրբեջանը թող առաջարկի այնպիսի քարտեզ, որը կունենա իրավական հիմք: Կարելի է բերել մեր թվարկությունից առաջ 2-րդ դարի քարտեզ, կարելի է բերել Թուրքմենչայի պայմանագրի արդյունքում ձեւավորված քարտեզը: Դա լուրջ չէ: Քարտեզը պետք է ունենա իրավական հիմք եւ պաշտոնական փաստաթուղթ լինի, ոչ թե պատմաբանների կողմից իրենց ցանկացած ձեւով նկարած քարտեզ: Այդպես չի կարող լինել: Այդպիսի քարտեզ ներկայացնելը բերելու է պատերազմի: Սա մեր հստակ դիրքորոշումն է»,-ասաց Պապոյանը:

Պապոյանի խոսքով՝ թեեւ Ալիեւի հայտարարությունները չեն նպաստում խաղաղությանը, հայկական կողմը կշարունակի բանակցություններն Ադրբեջանի հետ, քանի որ հակառակ պարագայում երկու կողմը գնալու են պատերազմի:

ՎԱՎԵՐԱՑՎԵՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ազգային ժողովը վավերացրեց «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ավստրիայի դաշնային կառավարության միջեւ՝ «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունը:

Արձանագրությունը վավերացնելու մասին նախագիծն ԱԺ նիստում ընդունվեց՝ ստանալով 93 կողմ ձայն:

Ըստ նախագծի՝ ԵՄ անդամ պետությունների հետ շարժունակության ոլորտը խթանելու կարեւորագույն նախապայմաններից մեկը ՀՀ-ԵՄ հետընդունման համաձայնագրի պատշաճ իրականացումն է: Այն հատկապես որոշիչ նշանակություն ունի անկանոն միգրացիայի դեմ պայքարի համատեքստում: Համաձայնագրում, ի թիվս այլ հարցերի, կոչ է արվում կողմերին կնքել կիրարկման արձանագրություններ:

Նախագիծը ներկայացնելիս ներքին գործերի փոխնախարար Արփինե Սարգսյանը նշել էր, որ սա թույլ է տալիս նաեւ ընդգծելու ՀՀ-ի պատրաստակամությունը՝ հետ ընդունել, ռեադմիսիոն գործընթացներ ապահովել այն անձանց համար, որոնք անկանոն բնակություն են հաստատել ԵՄ տարբեր երկրներում:

Մինչեւ այս պահը ուժի մեջ են մտել 7 երկրների հետ արձանագրություններ՝ Բուլղարիա, Չեխիա, Գերմանիա, Ֆրանսիա, Էստոնիա, Լեհաստան:

ԱԳՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՁԳՏՈՒՄՆԵՐԸ

2023 թ. ՀՀ արտաքին քաղաքականության կարեւոր ուղղություններից է եղել եվրոպական երկրների ու կառույցների հետ քաղաքական երկխոսության խորացումը, օրակարգի ընդլայնումն ու բազմակողմ հարթակներում փոխգործակցության սերտացումը. այս մասին հաղորդագրություն է տարածել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝ ամփոփելով ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցերը ԵՄ անդամ երկրներ:

«ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի կողմից արտերկիր կատարած 40 այցերից 20-ն իրականացվել է եվրոպական ուղղությամբ: Այցերի շրջանակներում կայացել են հանդիպումներ գործադիր եւ օրենսդիր շրջանակների հետ, քննարկումներ գիտահետազոտական ինստիտուտներում, ինչպիսիք են Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամը եւ "Chatham House"-ը, ինչպես նաեւ մասնակցություն համաժողովների, ինչպիսիք են Դուբրովնիկի (Խորվաթիա) եւ Բլեդի (Սլովենիա) անվտանգային հարցերով համաժողովները:

2023թ. ՀՀ-ԵՄ գործընկերության զարգացման դինամիկան առանձնահատուկ է եղել. ՀՀ-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով ստեղծված գործընկերության ինստիտուցիոնալ շրջանակի շարունակական իրականացմանը, ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումներին աջակցությանը զուգահեռ հարաբերությունները համալրվել են նոր բովանդակությամբ:

ԵՄ անդամ երկրներից կայացել են նախարարի պաշտոնական ու աշխատանքային այցերը Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Ավստրիա, Պորտուգալիա, Իսպանիա, Մալթա, Սլովենիա, Ռումինիա եւ Խորվաթիա, այցով Հայաստան են ժամանել Գերմանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Խորվաթիայի, Հունգարիայի եւ Էստոնիայի ԱԳ նախարարները: Կայացել են հանդիպումներ եւ հեռախոսազանգեր ԵՄ բոլոր անդամ երկրների հետ: Նախարար Միրզոյանը մասնակցել է ԵՄ ԱԼԳ նախարարական հանդիպմանը, ինչպես նաեւ ելույթով հանդես եկել ԱԼԳ քաղաքացիական ֆորումի տարեկան նստաշրջանին»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՀՀ ԱԳ նախարարը նախորդ տարի ԵՄ կողմի հրավերով Բրյուսելում մասնակցել է ԵՄ արտաքին գործերի նախարարների հանդիպմանը: Այս ձեւաչափով առաջին քննարկումը, որը հաջորդել է Եվրոպական խորհրդարանում ՀՀ վարչապետի ելույթին, արտացոլում է խորացող քաղաքական երկխոսությունը՝ ի շահ ՀՀ քաղաքացիների եվրոպական ձգտումների կյանքի կոչման: Նախարար Միրզոյանը ելույթով հանդես է եկել նաեւ Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նիստում:

ՀՀ-ԵՄ համագործակցությունը համալրվել է նոր ուղղությամբ ու ձեւաչափով. 2023 թ. հունվարի 26-ին Երեւանում կայացել է ՀՀ-ԵՄ քաղաքական եւ անվտանգային հարցերով երկխոսության անդրանիկ նիստը, իսկ 2-րդ նիստը՝ նոյեմբերի 15-ին՝ Բրյուսելում:

Առաջնային կարեւորության հարցերի շարքում՝ տարեսկզբին երկու տարի ժամկետով ՀՀ-ում տեղակայվել է ԵՄ քաղաքացիական առաքելությունը, իսկ տարեվերջին կայացվել է առաքելության անձնակազմի կրկնապատկման մասին որոշումը:

Նոյեմբերի 29-ին Երեւանում մեկնարկ է տրվել ՀՀ-ԵՄ ներդրումների համակարգման հարթակին: Տարեվերջին կայացել է նաեւ փաստահավաք առաքելությամբ ԵՄ պատվիրակության այց Հայաստան՝ միտված ոլորտային համագործակցության խորացմանն ու ընդլայնմանը:

Եվրոպական խաղաղության գործիքի միջոցով ՀՀ-ին աջակցության եւ ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի հարցերը քննարկվել են ԵՄ արտաքին գործերի նախարարների խորհրդում, որի արդյունքներով տրվել են հանրային ուղերձներ, այդ թվում՝ երկխոսության մեկնարկը դիտարկելու վերաբերյալ:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ պայմանավորված տարածաշրջանային եւ Լեռնային Ղարաբաղում զարգացումներով՝ տարվա ընթացքում շարունակվել է ԵՄ ներգրավվածությունը Հարավային Կովկասում կայունության ու խաղաղության հաստատման ուղղությամբ ջանքերին: ՀՀ-ԵՄ գործընկերության եւ տարածաշրջանային հարցերի վերաբերյալ Եվրոպական խորհրդարանն ընդունել է կարեւոր շեշտադրումներով մի շարք բանաձեւեր:

ԱՐՑԱԽ

ԱՇԽԱՏԱՍԵՐ՝ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ

«Սեպտեմբերին բազմաթիվ արցախցիներ խմբերով բնակվում էին Աբովյան քաղաքի սպորտդահլիճում: Ժամանակի ընթացքում համայնքի եւ նրանց համատեղ ուժերով մարդիկ բնակարան գտան եւ տեղափոխվեցին: Դեկտեմբերի տվյալներով՝ Աբովյանի սպորտդահլիճում ապրում են մոտ 70 բռնի տեղահանված արցախցի»,- ArmLur.am-ի հետ զրույցում նշել է Աբովյանի համայնքապետարանի մամուլի քարտուղար Ռոզա Նալբակյանը:

Պատասխանատուի խոսքով՝ սպորտդահլիճում բնակվող անձինք եւս շահագրգռված են առանձին բնակարան վարձակալելու եւ աշխատանք գտնելու համար, սակայն քանի որ բնակարանի վարձերն այդքան էլ մատչելի չեն, շարունակում են դեռ խմբերով բնակվել:

«Ժամանակի հարց է, նրանց համար եւս բնակարան կգտնվի, եւ նրանք եւս կունենան իրենց առանձին տանիքը: Հիմնական խանգարող հանգամանքն այն է, որ տների վարձերը մատչելի չեն, իսկ մարդիկ ոչ միայն չունեն բարձր գնով տուն վարձակալելու հնարավորություն, այլեւ աշխատանք չունեն: Բնակարան գտնելը Աբովյանում եւս դժվար է, քանի որ մարզերից ունենք ուսանողներ, ընտանիքներ, որոնք վարձակալությամբ բնակվում են այստեղ եւ սովորում կամ աշխատում են Երեւանում: Աբովյանից Երեւան բավականին հարմար է ամեն օր գնալ եւ գալու համար»,- նշել է Ռ. Նալթակյանը:

2023թ. Արցախի հայաթափումից հետո Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում բնակություն է հաստատել ավելի քան 6000 բռնի տեղահանված արցախցի: Նալթակյանի խոսքով՝ մեծ մասը նախընտրել է բնակվել Աբովյան քաղաքում, Բալահովիտում, Գեղաշենում, Վերին Պտղնիում:

«Պարբերաբար պետության, հասարակական տարբեր կազմակերպությունների կողմից աջակցություններ է տրամադրվում մեր հայրենակիցներին: Իրենք էլ բավականին աշխատասեր մարդիկ են, եւ երեւում է՝ սիրել են մեր համայնքը: Հաճախակի ենք նկատում համայնքի տարբեր անկյուններում արցախցիների կողմից բացած խանութները, տարածքները, որտեղ ներկայացնում են իրենց ավանդական կերակուրները, քաղցրավենիքները»,- ասել է Ռոզա Նալթակյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՊԵԿ

«ԾԵԾԵԼՈՎ՝ ՕՐԵՆՔԻ ԵՐԿԻ՞Ր...»

Գյումրեցի Լեւոն Գասպարյանը հոր եւ 70-ամյա տարեց հարեւանի հետ իր կնոջ եւ դստեր աչքի առաջ Բավրայի անցակետի մաքսատան աշխատակիցների կողմից ծեծի է ենթարկվել: Այս մասին ԶԼՄ-ներին պատմել է Լեւոն Գասպարյանը:

Լեւոնը պատմել է, որ հաճախ է Վրաստան մեկնում՝ այնտեղից մատչելի գնով ընտանիքի համար սնունդ ու հագուստ գնելու, վերջին անգամ 5 կիլոգրամ պնդուկ է բերել, սակայն մաքսատանը չեն թույլատրել անցկացնել՝ նշելով, որ դա ապօրինի ներմուծման փորձ է:

«Մաքսատան պետն ասում է. «Դու էս ամիս 2 անգամ եկել ես»: Ասացի. «Այո՛, 2 անգամ եկել եմ. մի անգամ գնացել եմ հյուր, հետս բերել եմ 5 կիլոգրամ կաղին, մյուս անգամը բերել եմ պամպերս երեխեքիս համար: Եթե մայրդ կամ քույրդ գա, 5 կիլոգրամ կոնֆետ լինի ձեռքում, էլի այդպես կասե՞ս»: Ասաց՝ արի՛ դուս հլը»,- ասել է Լեւոն Գասպարյանը:

Գյումրեցի տղամարդու խոսքով՝ երկու տասնյակից ավելի աշխատակիցներ ոտքերով ու ձեռքերով հարվածել են իր գլխին. «Ոտքով, ձեռքով.. մի հոգի չի եղել, որ պաշտպանի, հակառակը՝ ընդհանուր էին ծեծում: Գլխիս հատվածներում այնքան էին հարվածել, որ շտապ օգնություն եմ կանչել, ճնշումս 210 էր, կուզեին հիվանդանոց տանել, բայց հրաժարվեցի: Մաքսատան բոլոր աշխատակիցները...»:

Քաղաքացին պատմել է, որ ծեծի է ենթարկվել նաեւ իր՝ հաշմանդամություն ունեցող 65-ամյա հայրը, որը փորձել է օգնության հասնել որդուն, այնուհետեւ՝ նաեւ նրանց հարեւանը? «Որ ծեծում էին, ասում էին՝ կամեռաներն անջատե՛ք, զապիս չլինի: Եթե ես սխալ էի, թող կանչեին իրավապահ մարմիններին, ոչ թե դնեին ծեծեին: Ես սենց անարխիա չեմ տեսել, սա ի՞նչ էր: Երանի պիտի տանք 2018-ին, որ Սերժ Սարգսյանն էր, ես էլի եմ գնացել-եկել, սենց բան չեմ տեսել: Ի՞նչ օրենքի երկիր, ծեծելով օրենքի երկի՞ր...»:

Լեւոնը հաշմանդամության 3-րդ կարգ ունի, ասում է՝ տեսողության հետ կապված խնդիրներ ունի, ծեծից հետո էլ այժմ գրեթե չի տեսնում:

Դեպքի առնչությամբ ԶԼՄ-ներին պարզաբանում է տվել ՊԵԿ-ը, որում, մասնավորապես, նշվում է. «Քաղաքացի Լ. Գասպարյանը պարբերաբար իրականացնում է սահմանահատումներ Բավրայի սահմանային անցակետով՝ իր հետ անձնական օգտագործման ապրանքների անվան տակ ներմուծելով կենցաղային տարբեր ապրանքներ: Շատ հաճախ վերջինս եւ ուղեկցող անձինք լինում են ոչ սթափ վիճակում՝ դրսեւորելով ոչ հարիր եւ ագրեսիվ վարքագիծ: Նման վարքագիծ վերջիններս դրսեւորում են միտումնավոր՝ հայտարարագրման ենթակա ապրանքները քողարկելու նպատակով: 15.01.2024թ. վերոնշյալ քաղաքացին եւ ուղեկցող եւս 7 քաղաքացի, որոնցից 2-ը՝ իգական սեռի, մուտք են գործել մաքսային հսկողության գոտի ոչ սթափ վիճակում, ոչ ադեկվատ եւ ագրեսիվ պահվածքով: Տեւական ժամանակ այլ քաղաքացիների ներկայությամբ հնչեցրել են հայհոյանքներ, փորձեր են կատարել վնասել պետական գույքը, խաթարել են մաքսային կետի բնականոն աշխատանքը, չեն ենթարկվել մաքսային ծառայողի օրինական պահանջներին: Նշված անձանց կարգի հրավիրելու եւ իրավիճակը վերահսկելի դարձնելու բազմաթիվ ապարդյուն փորձերից հետո մաքսային ծառայողների կողմից մաքսային հսկողության գոտուց դուրս են հրավիրվել, որի ընթացքում նշված անձը ցուցաբերել է դիմադրություն: ՊԵԿ-ի կողմից ձեռնարկվել են համապատասխան քայլեր ծառայողական քննությամբ դեպքի համակողմանի քննության նպատակով»:

ԶԼՄ-ներին Քննչական կոմիտեից հայտնել են, որ դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել պաշտոնատար անձի կողմից ծառայողական լիազորություններն անցնելու հոդվածով: Վարույթը քննչական ենթակայության կարգով փոխանցվել է Հակակոռուպցիոն կոմիտե:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԹԱՎՇՅԱ» ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը հայտարարություն է տարածել. «2024 թվականի հունվարի 11-ին Հանրային հեռուստաընկերության եթերում ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, պատասխանելով 44-օրյա պատերազմում պարտության պատճառների վերաբերյալ «համապարփակ հարցին», արել է հայտարարություններ, որոնք հաստատել են 44-օրյա պատերազմի հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովի իրական նպատակների վերաբերյալ նախկինում բազմիցս արտահայտված իմ մտահոգությունները:

Խոսելով պարտության պատճառներից՝ Անդրանիկ Քոչարյանը հիշատակել է «առանձին դրվագներ», մասնավորապես՝ անդրադարձել է այն քրեական գործին, որով անցնում եմ ես ու մի շարք նախկին բարձրաստիճան զինվորականներ, որն արժանացել է հանձնաժողովի նախագահի «մանրամասն ուսումնասիրությանը»:

Հատկանշական է, որ Անդրանիկ Քոչարյանի հայտարարությունները ոչ միայն բամբասանք ու զրպարտանք պարունակող քաղաքական շահարկումներ են, այլեւ հակասում են «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որով հստակ ձեւակերպված է, որ Քննիչ հանձնաժողովի քննության առարկա չեն կարող հանդիսանալ նախնական քննության կամ դատավարության որեւէ այլ փուլում գտնվող հարցերը, ինչպես նաեւ այն հարցերը, որոնք հաստատվել կամ հերքվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

«Անորակ հրթիռների» գործով դատավճիռ դեռեւս չի կայացվել, իսկ դատարանն այդպես էլ չընդունեց բաց դատավարություն անցկացնելու վերաբերյալ իմ եւ մյուս «մեղադրյալների» բազմաթիվ միջնորդությունները, քանզի բաց դատավարության անցկացման պարագայում հանրությանը հնարավորություն էր տրվելու տեսնել, որ գործ ունենք ոչ միայն անհիմն մեղադրանքի, այլեւ, ինչպես նախկինում հայտարարել եմ, քրեադատավարական փաթեթավորմամբ «թավշյա» քաղաքական հետապնդման հետ:

Ուստի, հաստատվում են դեռեւս ԱԺ քննիչ հանձնաժողովի բաց նիստում բարձրաձայնված այն մտահոգություններս, որ 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի նախագահն իր ողջ գործունեության ընթացքում, իրական քննության փոխարեն, զբաղված է եղել պարտությունը զինված ուժերի վրա «փաթաթելու» գործով, եւ հենց այդ տրամաբանությունից են բխում Հանրային հեռուստաընկերության եթերում հնչեցված զրպարտիչ եւ օրենքին հակասող հայտարարությունները:

Սույն հայտարարությամբ ՀՀ գլխավոր դատախազի ուշադրությունն եմ հրավիրում օրենքի վերը նշված կոպտագույն խախտման փաստի վրա»:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՄՔ ԵՎ ՋԱՆՔԵՐ ԵՆ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանն ընդունել է ԱՄՆ պետական դեպարտամենտի Գլոբալ հակակոռուպցիոն հարցերով համակարգող Ռիչարդ Նեֆյուի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում են եղել նաեւ ԱՄՆ պետական դեպարտամենտի Գլոբալ հակակոռուպցիոն հարցերով համակարգողի խմբի ղեկավար Քրիստեն Ֆրեսոնկը, Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան Չիփ Լեյթինենը եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարեւ իրավապահ համագործակցության ծրագրի (INL) տնօրեն Ալեքսիս Հաֆթվանին:

ԶԼՄ-ների փոխանցմամբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնում են, որ Սասուն Խաչատրյանը ներկայացրել է կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները, անդրադարձել կոռուպցիայի դեմ պայքարում արձանագրված արդյունքներին՝ նշելով, որ 2022 թվականի համեմատ՝ 2023 թվականին կոմիտեի վարույթում քննված եւ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի թիվն աճել է 98,8 տոկոսով, իսկ դատի տրված անձանց թիվը՝ 96,5 տոկոսով, ինչը պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմամբ եւ բացահայտումների աճով:

Ռիչարդ Նեֆյուն, որը նաեւ նախագահել է նախորդ տարվա դեկտեմբերին ԱՄՆ Ատլանտա քաղաքում կայացած Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողովի 10-րդ նստաշրջանը, կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանին շնորհակալություն է հայտնել այդ համաժողովում Հայաստանի կողմից լուրջ եւ բարձրաստիճան ներկայացուցչություն ապահովելու համար եւ նշել, որ այժմ արդեն պետք է գործուն քայլեր ձեռնարկվեն համաժողովի ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ընդունված բանաձեւերի իրագործման ուղղությամբ: Ռիչարդ Նեֆյուն միաժամանակ ընդգծել է կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության կարեւորությունը՝ հաշվի առնելով, որ կոռուպցիան ինքնին միջազգային մակարդակի համընդհանուր խնդիր է, որը լուծելու համար համատեղ կամք եւ ջանքեր են պահանջվում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ քննության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ու տեխնիկական ավելի մեծ հնարավորություններ ունեցող սարքավորումների ձեռք բերման անհրաժեշտությանը: Ամերիկյան կողմը պատրաստակամություն է հայտնել ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության ծրագրի (INL) միջոցով շարունակել աջակցությունը Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների զարգացման եւ ծառայողների մասնագիտական գիտելիքների կատարելագործման ուղղությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 66 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Տավուշի մարզկենտրոն Իջեւանը մարզի խոշոր համայնքներին՝ Նոյեմբերյանին, Դիլիջանին կապող հասարակական տրանսպորտ չի գործում: Գործում է միայն Բերդ համայնքից Իջեւան մեկնող եւ հակառակ ուղղությամբ գործող միկրոավտոբուսային երթուղի: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե մարզպետարանն ինչ միջոցներ է ձեռնարկում մարզկենտրոն Իջեւանը մարզի համայնքներին հասարակական տրնասպորտով կապելու համար: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Իջեւան-Բերդ, Իջեւան-Նոյեմբերյան եւ Իջեւան-Դիլիջան հասարակական տրանսպորտը գործում է ոչ կանոնավոր: Այժմ հասարակական տրանսպորտի բոլոր լիազորությունները վերապահված են ՀՀ ՏԿԵՆ նախարարությանը: Նշված երթուղիների կանոնակարգումը նախատեսված է կարգավորել 2024 թվականին կայանալիք միասնական երթուղային ցանցի մրցութային գործընթացի իրականացման շրջանակներում»: Իջեւան-Նոյեմբերյան եւ Իջեւան-Դիլիջան ուղղություններով հասարակական տրանսպորտը ոչ թե գործում է ոչ կանոնավոր, ինչպես հայտնում են Տավուշի մարզպետարանից, այլ ընդհանրապես չի գործում, միասնական երթուղային ցանցի մրցութային գործընթացի մասին էլ տարիներ շարունակ խոսվում է, սակայն չի իրականացվում. ոչ մի երաշխիք չկա, որ այն 2024 թվականին կիրականացվի:

ԱՄԵՆԱՑԱԾՐ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ 2023 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ Տավուշի մարզի համայնքների սեփական եկամուտների 2023 թվականի կատարողականը կազմել է 96.2%, այդ թվում՝ Իջեւան համայնքում՝ 99.0%, Դիլիջան համայնքում՝ 91,2%, Բերդ համայնքում՝ 103,5%, Նոյեմբերյան համայնքում՝ 92,7%: Մարզի 4 խոշոր համայնքներից 3-ը սահմանամերձ են, միայն Դիլիջանը Ադրբեջանի հետ սահման, սահմանամերձ վտանգավոր, հակառակորդի զինուժի նշանառության տակ գտնվող ականապատ հողեր չունի: Տուրիստական Դիլիջանում մեծապես զարգացած է հյուրանոցային, ռեստորանային բիզնեսը: Ըստ տրամաբանության՝ Դիլիջան համայնքում պետք է սեփական եկամուտների՝ մարզում ամենաբարձր կատարողականը լիներ, սակայն մարզում ամենացածրն է: Դա չի խանգարել, որ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը 2023թ. դեկտեմբերի 27-ին «աշխատանքի հանդեպ ցուցաբերած բարձր պատասխանատվության եւ արդյունավետ աշխատանքի համար» շնորհակալագիր հանձնի Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԵԿ

ԽԻՍՏ ՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԵՏՀ խորհրդի՝ 2021 թ. նոյեմբերի 12-ի «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում համապատասխանության մասով պարտադիր գնահատման ենթակա արտադրանքը Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծելու կարգի մասին» թիվ 130 որոշմամբ սահմանված են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում համապատասխանության մասով պարտադիր գնահատման ենթակա արտադրանքը Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծման կարգը, թվարկված են բոլոր այն դեպքերը, որոնց համար մաքսային մարմիններին պետք է ներկայացվեն կամ չներկայացվեն տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի ներմուծման համար օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված եւ (կամ) ճանաչված համապատասխանության գնահատման մարմինների կողմից տրամադրված համապատասխանության գնահատման փաստաթղթերը: Այդ մասին ԶԼՄ-ներին հայտնում են Էկոնոմիկայի նախարարությունից:

«Ներկա պահին ՀՀ-ում ինտենսիվ աշխատանքներ են տարվում տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող բոլոր ապրանքների համար համապատասխանության գնահատման ապահովման բավարար պայմաններ ստեղծելու, լաբորատոր կարողություններ զարգացնելու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, կից ցանկում նշված ապրանքների մասով ՀՀ-ում առկա են համապատասխանության գնահատման բավարար կարողություններ:

Հորդորում ենք բոլոր տնտեսավարողներին ծանոթանալ կից ցանկին եւ ԵՏՀ Խորհրդի 2021թ. նոյեմբերի 12-ի թիվ 130 որոշմամբ սահմանված դեպքերում անհապաղ սկսել անհրաժեշտ գործընթացները՝ համապատասխան տեխնիկական կանոնակարգով/երով սահմանված եւ մաքսային մարմինների կողմից պահանջվող փաստաթղթի առկայությունը արդեն իսկ ներմուծման ժամանակ ապահովելու ուղղությամբ:

Տեղեկացնում ենք նաեւ, որ 2024թ.-ի ապրիլի 1-ից (բացառությամբ ցանկի 9-րդ կետի, որի մասով ՀՀ ներմուծման փուլում Մաքսային մարմինների կողմից պահանջվելու են 2024 թվականի հուլիսի 1-ից, ինչպես նաեւ 6-րդ կետի, որի մասով պահանջը գործում է դեռեւս 2022թ. հուլիսի 1-ից) իրականացվելու են խիստ հսկողական միջոցառումներ տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության գնահատման անհրաժեշտ փաստաթղթերի առկայության ստուգման մասով, եւ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ ՀՀ ներմուծման փուլում տվյալ փաստաթղթի բացակայության պարագայում ապրանքների բացթողումը մաքսային մարմինների կողմից չի թույլատրվելու:

ՀՀ-ում հավատարմագրված եւ ԵԱՏՄ միասնական ռեեստրում ներառված համապատասխանության գնահատման մարմինների տվյալները հասանելի են «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ պաշտոնական կայքէջի «ՌԵԵՍՏՐՆԵՐ» բաժնում:

Միաժամանակ, նույնաբովանդակ տեղեկատվություն առկա է նաեւ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմինների մասով ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

Հարկ է նաեւ նշել, որ, բացի կից ցանկերում ներառված մարմիններից, համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթի ներկայացման համար տնտեսվարողները կարող են դիմել նաեւ ԵԱՏՄ միասնական ռեեստրում ներառված, ԵԱՏՄ անդամ պետությունների այլ համապատասխանության գնահատման մարմինների եւս, որոնց կողմից տրամադրված համապատասխանության գնահատման փաստաթղթերը ընդունելի են ԵԱՏՄ ամբողջ տարածքում:

Տեղեկացվում է, որ կից ցանկում չնշված՝ ԵԱՏՄ տարածքում գործող տեխնիկական կանոնակարգերի մասով եւս հետագայում կիրառելի է լինելու նույն մոտեցումը, կատարվելու է փուլային անցում՝ ապահովելով վերը նշված իրավական պահանջի կիրառելիություն մյուս տեխնիկական կանոնակարգերի դեպքում եւս: Կից ցանկում չներառված տեխնիկական կանոնակարգերի մասով ներմուծման ժամանակ համապատասխանության գնահատման փաստաթղթերի ներկայացման պահանջի կիրարկման վերաբերյալ կապահովվի լրացուցիչ իրազեկում»:

Apple

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԿԿՈՇՏԱՆԱ

Երկար տարիների ընթացքում առաջին անգամ Apple-ը պատշաճորեն նվազեցնում է նոր iPhone սմարթֆոնների գները Չինաստանում: Սա տեղի է ունենում ափխարհի խոշորագույն սմարթֆոնների շուկայում աճող մրցակցային ճնշման ֆոնին. ընկերությունը վախենում է պահանջարկի անկումից:

Ինչպես հայտնում է Bloomberg-ը, Apple-ը Չինաստանում 5%-ով իջեցրել է որոշ iPhone-ների գները, սակայն ակցիան ժամանակային սահմանափակում ունի. այն կտեւի հունվարի 18-ից մինչեւ 21-ը, այսինքն՝ վաճառքի սեզոնին մինչեւ չինական Ամանորը: Զեղչը կկազմի 500 յուան, որը կազմում է մոտ $70:

Հետաքրքիր է, որ ընկերությունը երկար տարիներ անընդմեջ չի նվազեցնում գները չինական Նոր տարվա ընթացքում: Այնուամենայնիվ, Չինաստանում iPhone 15-ի վաճառքը շատ ավելի վատ է ընթացել, քան նախորդ մոդելների դեպքում. ըստ երեւույթին, դա ընկերությանը դրդել է մտածել զեղչերի մասին:

Ինչո՞ւ են iPhone-ները վատ վաճառվում Չինաստանում: Նախ՝ տեղական մրցակիցները, ինչպիսիք են Huawei-ը եւ Xiaomi-ն, առաջարկում են մրցունակ մոդելներ: Օրինակ՝ Huawei Mate 60-ը շատ հաջող թողարկում է, իսկ ընկերությունները եւ պետական գերատեսչությունները սահմանափակում են Apple սարքերի օգտագործումը աշխատակիցների կողմից: Այս ամենի արդյունքում Չինաստանում iPhone-ի վաճառքը 2024-ի առաջին շաբաթվա ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 30%-ով, իսկ անցած տարվա ընթացքում անկումը կազմել է 3%: Ավելին՝ վերլուծաբաններն ակնկալում են, որ այս տարի Apple-ի համար մրցակցային միջավայրն էլ ավելի կկոշտանա:

Canalys հետազոտական ընկերության ավագ փոխնախագահ Նիկոլ Փենն ասում է, որ զեղչերն անակնկալ չէին, քանի որ Apple-ը ճնշման տակ է, հատկապես Չինաստանում աճող մրցակցության եւ նոր հեռախոսներ գնելու՝ Apple-ի երկրպագուների շրջանում աճող դժկամության պայմաններում:

«Ակնհայտ է, որ Huawei-ը վերադառնում է,- ասել Փենը:- Որոշ չինացի սպառողներ կարող են վերադառնալ Huawei-ի օգտագործմանը՝ հայրենասիրությունից դրդված»:

Նշենք, որ Apple-ը նաեւ 800 յուանի (ավելի քան $110) զեղչ է արել MacBook Air նոր մոդելի համար:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ԳՈՅ»

ԵՐԲ ԹԱՏՐՈՆԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

«Գոյ» թատրոնը, որն առանձնացել է ժամանակակից բեմադրություններով, հետաքրքիր փորձերով եւ երիտասարդական ուժի ակտիվ մասնակցությամբ, հիմնադրվել է 1988 թվականի դեկտեմբերի 1-ին:

Դեռեւս մեկ շաբաթ գոյություն ունեցող թատրոնի կազմն իր գործունեությունը սկսել է Սպիտակի երկրաշարժի աղետի գոտում՝ մասնակցելով փրկարարական աշխատանքներին, ապա երեք ամիս շարունակ անօթեւան մնացած բազմաթիվ մարդկանց համար խաղացել է Թումանյանի հեքիաթները:

Այն լայն հասարակության համար իր դռներն է բացել 1989 թվականի մարտին: Թատրոն-լաբորատորիայի հիմնադիրներն են Արմեն Մազմանյանը (ում անունով էլ ապագայում կոչվեց այն), Արթուր Սահակյանը, Սամսոն Ստեփանյանը եւ Արսեն Աբրահամյանը, որոնք հետագայում իրենց գործունեությունը ծավալեցին թատերական աշխարհում՝ տարբեր բեմերում իրենց ավանդը բերելով հայ թատրոնի զարգացման գործում:

Թատրոնն իր գործունեությունը սկսել է մայր թատրոնի ձեղնահարկում, ապա՝ 1996-ից 2006 թվականներին՝ վարձակալական իրավունքով տեղափոխվել Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի շենք եւ կրկին վերադարձել Սունդուկյանի անվան թատրոն: Այն ի սկզբանե նպատակ է ունեցել ներկայանալ որպես ազգային խաղիկների, հայ էպիկական ու գուսանական, «երգ երգոցի ու պարոցի» հիմքով թատրոն-լաբորատորիա: Ավելի ուշ թատրոնն իր առջեւ դնում է հստակ խնդիր. «Գոյ»-ի բեմում ստեղծագործել՝ հիմքում դնելով համաշխարհային գեղարվեստական, փիլիսոփայական, թատերական ավանգարտ գործընթացները:

2010 թվականին «Գոյ» թատրոն-լաբորատորիան դառնում է պետական թատրոն՝ վերանվանվելով «Գոյ» բեմարվեստի ազգային փորձարարական կենտրոնի:

Իր գործունեության ընթացքում, հակառակ բազմաթիվ դժվարություններին, թատրոնը հանդես է եկել բազմաթիվ ներկայացումներով, մասնակցել մի շարք փառատոնների, հանդես եկել հյուրախաղերով: Այն համարձակ քայլի է գնացել եւ առանձնացել՝ իր խաղացանկում ժամանակակից անվանի թատերագիրների ստեղծագործություններ ներառելով:

«Գոյ» թատրոնի զարգացման գործում իրենց ավանդն են ունեցել դերասաններ Կարինե Ջանջուղազյանը, Սերգեյ Դանիելյանը, Տրդատ Մակարյանը, Նարե Հայկազյանը, Մարինե Պետրոսյանը, նկարիչ Մկրտիչ Մկրտչյանը եւ բազմաթիվ այլ գործիչներ: Այսօր էլ թատրոնն ունի բազմաթիվ երիտասարդ դերասաններ, այդ թվում՝ Գուրգեն Սարգսյան, Սամվել Թոփալյան, Վաչէ Երիցյան եւ Արսեն Ազիզյան:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Գ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐ՝ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ

«Ամերիաբանկ»-ն իր հաճախորդներին է ներկայացնում հայաստանյան ֆինանսաբանկային համակարգի համար եզակի լուծում՝ MyTour, որը հնարավորություն է ընձեռում ամրագրել զբոսաշրջային փաթեթներ MyAmeria հավելվածի միջոցով: MyTour-ի ինտեգրումը MyAmeria հավելվածում իրականացվել է «Դիննո» ընկերության հետ գործակցության շնորհիվ:

«Շուկայում արտագնա տուրերի ուղղությունների եւ առաջարկների աճին զուգահեռ ճիշտ եւ հենց ձեր կարիքներին համապատասխան փաթեթ գտնելը վերածվել է ժամանակատար եւ շատ ջանք պահանջող գործընթացի: MyTour-ի նպատակն է վերափոխել ճանապարհորդության պլանավորման գործընթացն ու առաջարկել աննախադեպ՝ մեկ վայրում ամբողջական զբոսաշրջային փաթեթներ ուսումնասիրելու եւ ամրագրելու հնարավորություն»,- ասում է MyTour-ի պրոդուկտի մենեջեր Լիլիթ Հայրապետյանը:

Այս գործիքն իր տեսակի մեջ առաջինն է շուկայում, որն օգտատերերին թույլ է տալիս մեկ հարթակում ուսումնասիրել միաժամանակ տասնյակ տուր փաթեթներ՝ ընդլայնված գործառույթներով. օգտատերը կարող է փաթեթների գների ակնթարթային հաշվարկներ կատարել՝ փոխելով ճանապարհորդների կամ օրերի քանակը, թռիչքի օրը եւ այլն: Իսկ վերջնական ընտրություն կատարելուց հետո հնարավոր է անմիջապես նույն հարթակում կատարել ամրագրում:

«MyTour-ի կարգախոսն է «app-ից ափ», ինչը լիովին համահունչ է մեր նպատակներին, քանի որ գործարկելով MyAmeria-ն՝ մենք ձգտում էինք հաճախորդների համար անել ավելին, քան պարզապես ավանդական բանկային ծառայությունների թվայնացումն էր, առաջարկել ֆինանսական եւ ոչ ֆինանսական մի շարք ծառայություններ մեկ հարթակում: Այս ճանապարհին մենք շարունակ կատարելագործում ենք հավելվածն ու նոր հնարավորություններ ավելացնում: Եվ սա դեռ միայն սկիզբն է»,- ասում է «Ամերիաբանկ»-ի թվային վաճառքների եւ փորձառության բաժնի ղեկավար Ռուզաննա Գրիգորյանը:

MyTour հարթակում այս պահին հասանելի են զբոսաշրջային փաթեթներ դեպի Եգիպտոս: Առաջիկայում փաթեթների աշխարհագրությունն ընդլայնվելու է, ավելանալու են նոր ուղղություններ:

«Դեպի Եգիպտոս փաթեթները տրամադրվում են առաջատար տուրիստական ??օպերատորներից մեկի՝ Skytour-ի կողմից: Առաջիկայում մենք պլանավորում ենք նաեւ այս առումով ընդլայնել ծառայությունների ցանկը՝ առաջարկելով ոչ միայն նոր ուղղություններ, այլեւ տարբեր տուրիստական գործակալությունների փաթեթները մեկ հարթակում տեսնելու հնարավորություն: Երկարաժամկետ պլանավորման տեսանկյունից մենք MyTour-ը տեսնում ենք որպես ճանապարհորդական էկոհամակարգ, որը կհեղափոխի այն, թե ինչպես են մարդիկ պլանավորում իրենց ճամփորդությունը եւ ճանապարհորդում՝ վերածելով յուրաքանչյուր ուղեւորություն անհոգ ու հիշարժան փորձառության»,- ասում է Լիլիթ Հայրապետյանը:

Նոր ծառայությունը դեռեւս հասանելի է միայն հավելվածի iOS օգտատերերի համար: MyTour-ը շուտով կգործարկվի նաեւ Android օգտատերերի համար:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

«Ամերիա»-ն առաջինը Հայաստանում ստեղծել է էկոհամակարգեր ՓՄՁ-ների եւ անհատների համար՝ ապահովելով հասանելիություն բանկային եւ ոչ բանկային մի շարք ծառայությունների մեկ պատուհանի սկզբունքով:

Լինելով հաճախորդամետ՝ «Ամերիա»-ն ձգտում է ժամանակակից թվային աշխարհում ապահովել սպասարկման բարձր որակ՝ վստահելի եւ անվտանգ միջավայրում առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԲՈՒՀԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԸ՝ ՀՈՎԱՆԱՎՈՐՅԱԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտից առգրավված են 16 քննական տեղեկագրեր:

ՀՖԿՍՊԻ-ի հումանիտար եւ հասարակագիտության ամբիոնից աշխատախումբը առգրավել է 16 քննական տեղեկագրեր՝ ենթադրյալ կոռուպցիոն խախտումներով: Գործը ուղարկված է Գլխավոր դատախազություն: Նշված ամբիոնի վարիչին ԿԳՄՍ նախարար եղած ժամանակ ակնհայտ հովանավորել է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, իր օգնական Գոհար Մամիկոնյանը, որը հայտնի է ՀՖԿՍՊԻ-ի ռեկտոր Դավիթ Խիթարյանին անվստահության հիմքով ազատելու ակտիվ նախաձեռնությամբ: Ակնհայտ անօրինականության բացահայտմանը խոչընդոտում է ամբիոնի վարիչ Հասմիկ Ավագյանի մյուս ընկերուհին՝ Կարինե Քոչարյանը, որն աշխատում է նույն ամբիոնում, իսկ նրա ամուսինն աշխատում է վարչապետի աշխատակազմում:

ArmLur.am-ին այս հարցի առնչությամբ Ֆիզկուլտինստիտուտից փոխանցեցին. «Տեղեկատվությունը բացարձակ չի համապատասխանում իրականությանը: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի նախկին ռեկտոր Դավիթ Խիթարյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանը ներկայացվել է հաղորդում՝ ինստիտուտի հասարակական եւ հումանիտար գիտությունների ամբիոնի քննական տեղեկագրերում առկա բացթողումների վերաբերյալ»:

Նրանց խոսքով՝ հաղորդումը ՀՀ դատախազությունից փոխանցվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին, որտեղից Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտին տեղեկացրել են՝ հիշյալ հաղորդման եւ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հաղորդումը չի պարունակում այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որեւէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ուստի նշված հաղորդման հիման վրա քրեական վարույթ չի նախաձեռնվել: Քրեական վարույթ չնախաձեռնելու օրինականությունը հաստատվել է հսկող դատախազի կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ»

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ Է ԼՈՒԾՎՈՒՄ

Մեկնարկել է «Մենք ենք մեր սարերը» գործակալության՝ «Աջակցություն՝ արցախցի վարպետներին» ծրագրի երկրորդ փուլը, որի շրջանակում կազմակերպվում են դասընթացներ արհեստ սովորելու կամ որոշակի արհեստում հմտանալու հայց ներկայացրած մասնակիցների համար, եւ անհրաժեշտ գործիքներ ու սարքավորումներ են տրամադրվում գործող վարպետներին:

Ծրագրի առաջին փուլում ստացվել եւ ամփոփվել են մասնակցության համար ներկայացված հայտերը: Շուրջ 120 դիմորդից ընտրվել է ծրագրի չափորոշիչներին համապատասխանող 80 շահառու: Ծրագիրը նախատեսում է, որ բոլոր շահառուներին կտրամադրվեն անհրաժեշտ գործիքներ ու սարքավորումներ, իսկ նրանցից շուրջ 30-ը կմասնակցեն նաեւ դասընթացների:

«Կարելի է ասել, որ հիմնականում երեք մեծ խումբ է առանձնացվել՝ հրուշակագործներ, բյութի ոլորտի մասնագետներ՝ մատնահարդար-վարսահարդարներ եւ վերանորոգող արհեստավորներ: Հրուշակագործների, վարսահարդարների ու մատնահարդարների համար դասընթացներն արդեն մեկնարկել են, իսկ վերանորոգող վարպետները հիմնականում դիմել են գործիքներ ու սարքավորումներ ստանալու համար, քանի որ նրանք ամեն ինչ թողել են Արցախում»,-ասում է «Մենք ենք մեր սարերը» գործակալության սոցիալական ծրագրերի ղեկավար Արմեն Մանգասարյանը:

Դասընթացները տեւելու են մեկ ամիս եւ անցկացվելու են մասնագիտացած լավագույն ընկերություններում: Ավարտից հետո մասնակիցներին կտրամադրվեն անհրաժեշտ գործիքներ, որպեսզի արդեն կարողանան աշխատել իրենց նոր մասնագիտությամբ:

«Սա գործակալության փոքրամասշտաբ ծրագրերից է, որը սակայն յուրաքանչյուր մասնակցի համար զբաղվածության հարց է լուծում: Մենք սկսեցինք ծրագիրը՝ հաշվի առնելով, որ շատ վարպետներ զուտ գործիքների բացակայության պատճառով չեն կարողանում այստեղ շարունակել իրենց գործը: Մեր գործակալության համահիմնադիր Ռուբեն Վարդանյանը միշտ կարեւորել է այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք միջավայր եւ հնարավորություն են ստեղծում, որպեսզի մարդիկ ինքնարտահայտվեն, կարողանան աշխատել եւ արարել: Այս ծրագիրը նույնպես ոչ թե մեկանգամյա աջակցություն է ենթադրում, այլ հնարավորություն է տալիս, որպեսզի մարդիկ կարողանան աշխատել եւ հոգալ իրենց ընտանիքների կարիքները, ինչը հիմա շատ կարեւոր է արցախցի մեր հայրենակիցների համար»,-ասում է «Մենք ենք մեր սարերը» գործակալության տնօրեն Գրիգորի Մարտիրոսյանը:

Հնարավորության դեպքում գործակալությունը մտադիր է շարունակել ծրագիրը՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը:

«Մենք ենք մեր սարերը» գործակալությունը հիմնադրվել է 2022 թվականին Ռուբեն Վարդանյանի եւ նրա գործընկերների կողմից: Կազմակերպության ներկա ծրագրերն ուղղված են Արցախից բռնի տեղահանված հայրենակիցների աջակցությանը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

«ԵՐԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ ՕՐԵՐ» ՓԱՌԱՏՈՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐ

«Ակբա» բանկն առաջիկա 3 տարիներին կլարունակի լինել «Երեւանի գինու օրեր» փառատոնի գլխավոր հովանավորը:

Փառատոնի շրջանակում այս տարի նախատեսվում է ավելի հագեցած ծրագիր, հայկական գինիների համտես, տեղական ուտեստների մեծ ցուցադրություն եւ հատուկ հյուրեր:

«Մենք անում ենք քայլեր, որոնք օժանդակում են, որ Հայաստանում իրադարձային տուրիզմի ոլորտը դառնա ավելի գրավիչ: Կարեւորն այն է, որ Հայաստանը գինեգործական քարտեզներում ունի մի փառատոն, որին մասնակցելու համար մարդիկ իրենց օրացույցներում նշումներ են անում եւ գալիս են մասնակցելու: Հայաստանում շատ փառատոններ չկան, բայց այս եւ նման մի քանի հաջողված փառատոնները հույս են ներշնչում, որ մենք կունենանք փառատոնային ժամանցներով հարուստ երկիր, որը կգրավի ոչ միայն հայերին, այլ նաեւ արտասահմանից եկած հյուրերին»,- նշել է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելքոնյանը:

«2019-ից «Ակբա» բանկը հանդիսանում է «Երեւանի գինու օրերի» գլխավոր հովանավորը: Եվ այս տարիների շրջանակում ակնհայտորեն երեւում է փառատոնի եւ՛ աճը, եւ՛ զարգացումը: Փառատոնի մասշտաբները գնալով մեծանում են, եւ մենք համարում ենք, որ դա նաեւ «Ակբա» բանկի հետ համագործակցության շնորհիվ է: Ունենալով վստահություն այս համագործակցության վրա՝ մենք ամեն տարի համարձակ քայլեր ենք անում փառատոնը էլ ավելի մասշտաբային դարձնելու համար»,- նշել է «ԷվենտՏուրա» ընկերության համահիմնադիր եւ տնօրեն Մերի Բադալյանը:

Ակնկալվում է, որ այս տարի փառատոնի հյուրերի քանակը կգերազանցի 200.000-ը: Բազմաթիվ զբոսաշրջիկներ Հայաստան այցելելիս հատուկ ընտրում են փառատոնային օրերը հայկական էնդեմիկ սորտերի գինին ըմպելու եւ գաստրոնոմիկ ժառանգությանը ծանոթանալու համար:

«Ակբա» բանկը կարեւորում է Հայաստանում իրադարձային տուրիզմի, խաղողագործության եւ գինեգործության զարգացումը: Բանկն անում է հնարավորը, որպեսզի իրադարձային տուրիզմը դառնա տնտեսության զարգացման հերթական խթանը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայ-ֆրանսիական առեւտրաարդյունաբերական պալատի հրավերով՝ հունվարի 16-20-ը Հայաստան կայցելի ՊՍԺ-Պարի Սեն Ժերմենի դեսպան, ֆրանսիացի ֆուտբոլիստ Նիկոլա Անելկան: Այս այցի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, կքննարկվի Հայաստանում միջազգային չափանիշներով ֆուտբոլային ակադեմիայի հիմնումը: Ֆրանսիայի ընտրանու հետ նա խաղացել է ավելի քան 69 խաղ՝ հաղթելով Եվրոպայի առաջնությունում, ինչպես նաեւ Կոնֆեդերացիայի գավաթում: Նա խաղացել է բազմաթիվ միջազգային ակումբներում, այդ թվում՝ ՊՍԺ-ում, Արսենալում, Ռեալ Մադրիդում, Լիվերպուլում, Մանչեսթեր Սիթիում, Չելսիում, Յուվենտուսում:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Լեհական «Պոգոն»-ի երկրպագուները քվեարկությամբ որոշել են աշնանային հատվածի լավագույն ֆուտբոլիստին: Ակումբից տեղեկանում ենք, որ լավագույնը ճանաչվել է Վահան Բիչախչյանը: Հայաստանի հավաքականի հարձակվողի օգտին երկրպագուներից քվեարկել է 51,6%-ը: Բիչախչյանն աշնանն անցկացրել է 23 հանդիպում, խփել 5 գոլ ու կատարել 2 գոլային փոխանցում:

ՊԱՇՏՈՆԱԿ ԵՆ ԱՐԵԼ

Իտալական «Ռոմա»-ն հայտնել է, որ պաշտոնական է արել գլխավոր մարզիչ Ժոզե Մուրինյոյին:

«Շնորհակալ ենք Ժոզեին իր նվիրվածության համար: Միշտ լավ հիշողություններ ենք ունենալու՝նրա աշխատանքի հետ կապված, սակայն կարծում ենք, որ փոփոխություններ կատարելը ակումբի շահերից է ելնում: Ժոզեին ու նրա թիմին լավագույնն ենք մաղթում»,- ասել է ակումբի սեփականատեր Դեն Ռայան Ֆրիդկինովը: Պորտուգալացի մասնագետը 2021 թվականից աշխատում է «Ռոմա»-ում: Նրա գլխավորությամբ թիմը հաղթել է Կոնֆերենցիաների լիգայում, դուրս եկել Եվրոպայի Լիգայի եզրափակիչ:

ՇԱԽՄԱՏԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը շարունակում են Հայաստանի տղամարդկանց ու կանանց առաջնությունները. երեկ մասնակիցներն անցկացրել են 4-րդ տուրի պարտիաները: Տղամարդկանց մրցաշարում 3-ական միավորով առաջատարներ են դարձել Մամիկոն Ղարիբյանն ու Սամվել Տեր-Սահակյանը, երկուսն էլ վստահ հանդիպումներ են անցկացրել: Ղարիբյանը սպիտակ խաղաքարերով ուժեղ է եղել Ռոբերտ Հովհաննիսյանից, իսկ Տեր-Սահակյանը՝ Դավիթ Տիրատուրյանից: 2,5-ական միավոր ունեն եւ 3-4-րդ տեղերն են կիսում Մանուել Պետրոսյանն ու Ջավեն Անդրիասյանը: Սուսաննա Գաբոյանն ու Միլենա Գասպարյանն էլ 3,5-ական միավորով կանանց առաջնության մրցաշարային աղյուսակն են գլխավորում: 4-րդ տուրում Գաբոյանը հաղթել է Ալվարդ Ստեփանյանին, իսկ Գասպարյանը՝ ոչ-ոքի գրանցել Արփինե Գրիգորյանի հետ:

● *Հունվարի 19-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Ցիլինդր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞վ է հեղինակային իրավունքի իրավատերը:

Հռիփսիմե Խանամիրյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ում ստեղծագործական, մտավոր աշխատանքի արդյունքում ստեղծվել է ստեղծագործությունը («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված):

Հեղինակը կարող է իր բացառիկ գույքային իրավունքները փոխանցել կամ օգտագործման թույլտվություն տրամադրել այլ անձանց, որոնք, հեղինակից ձեռք բերելով այդ իրավունքները, դառնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատեր:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները եւ նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են «Հեղինակային իրավունքի մասին» օրենքով տրամադրվող իրավունքներից:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞վ է փորձնակը, ինչպե՞ս դառնալ փորձնակ:

Նարինե Առաքելյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Փորձնակը օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններում աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գրանցված անձն է:

Քաղաքացիական ծառայության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձնակների ցանկում, դիմումի համաձայն, կարող են ընդգրկվել վարկանիշային ցուցակում ընդգրկվելու համար թեստավորման արդյունքում առնվազն 30 միավոր հավաքած քաղաքացիները: Համապատասխան մարմինը, ուսումնասիրելով քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրված փորձնակների ցանկը, ընտրում է համապատասխան մարմնի փորձնակի աշխատանքային ծրագրի պահանջներին համապատասխանող անձին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆեյսբուքյան էջում Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրել է, որ չշահագործվող եւ ավերված գեղասահքի եւ տափօղակով հոկեյի մանկապատանեկան մարզադպրոցը միջազգային չափորոշիչներին համապատասխան լուծումներ կստանա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 8 - 11 - 2 + 3
Կոտայքի լեռներ	- 9 - 12 - 1 - 4
Կոտայքի նախալեռներ	- 4 - 6 + 1 + 3
Գեղարքունիք	- 7 - 11 - 2 - 4
Լոռի	- 8 - 13 0 + 4
Տավուշ	- 5 - 10 + 3 + 6
Արագածոտնի լեռներ	- 10 - 14 - 1 - 4
Արագածոտնի նախալեռներ	- 4 - 7 0 + 4

Արարատ	- 2 - 4 + 5 + 7
Արմավիր	- 4 - 9 + 4 + 6
Վայոց ձորի լեռներ	- 9 - 12 - 2 - 3
Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 4 + 7
Սյունիքի հովիտներ	- 2 - 4 + 4 + 6
Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 + 2 + 3
ԼՂՀ	- 5 - 9 + 1 + 3
Երեւան	- 1 - 3 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*